

ք.Երևան

----- ք.

«Ավանգարդ Մոթորս» ՍՊԸ-ն, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս տնօրեն Տիգրան Պոռչյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մի կողմից, և -----, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս -----, որը գործում է ----- հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

- 1.1. Սույն պայմանագրով Կատարողը պարտավորվում է սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո -- ----- ժամկետով Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել Սերսեդես-Բենց մակնիշի ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ, (այսուհետ՝ Ծառայություններ), իսկ Պատվիրատուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով ընդունել և վճարել այդ ծառայությունների համար:
- 1.2. Ծառայությունները մատուցված են համարվում Պատվիրատուի կամ նրա լիազոր ներկայացուցչի կողմից Վերանորոգման պատվերի /օրդերի/ և կատարողական ակտի երկկողմանի ստորագրված մեկ օրինակը ստանալու պահից:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

- 2.1. **Պատվիրատուն իրավունք ունի՝**
 - 2.1.1. ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի Ծառայությունների կատարման ընթացքը և որակը՝ առանց միջամտելու նրա գործունեությանը.
 - 2.1.2. պահանջել Կատարողից պատշաճ կարգով կատարել Ծառայությունները.
- 2.2. **Պատվիրատուն պարտավոր է՝**
 - 2.2.2. Ծառայությունների կատարման ամբողջ արժեքը վճարել Կատարողին՝ համաձայն սույն պայմանագրի 3.2. կետի.
 - 2.2.3. Կատարողին տրամադրել Ծառայությունների կատարման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն:
- 2.3. **Կատարողն իրավունք ունի՝**
 - 2.3.1. Ծառայությունների կատարման ընթացքում Պատվիրատուից պահանջել և ստանալ Ծառայությունների կատարման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն.
 - 2.3.2. իր կողմից կատարված Ծառայությունների դիմաց ստանալ վարձատրություն՝ սույն պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում.
 - 2.3.3. միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու կատարված Ծառայությունների ամբողջ արժեքը, ինչպես նաև վճարել սույն պայմանագրի 4.2. կետով նախատեսված տույժը, եթե Պատվիրատուն չի կատարել կամ ոչ պատշաճ է կատարել սույն պայմանագրի 2.2.2. կետով նախատեսված պարտավորությունը:
- 2.4. **Կատարողը պարտավոր է՝**
 - 2.4.1. Ձեռնամուխ լինել սույն պայմանագրով նախատեսված Ծառայությունների կատարմանը՝ սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո Պատվիրատուի կողմից ներկայացված Վերանորոգման պատվերը /օրդերը/ ստանալուց հետո.
 - 2.4.2. Ծառայությունները կատարել պատշաճ կարգով, որակով և ժամկետում՝ «Դայմլեր» կոնցեռնի ստանդարտներին համապատասխան.
 - 2.4.3. Ծառայությունները կատարել անձամբ.
 - 2.4.4. Վերանորոգման Ծառայությունները սկսելուց առաջ պատվիրատուի հետ գրավոր համաձայնեցնել Ծառայությունների նախահաշիվը և ժամկետները.
 - 2.4.5. Երաշխիքային ժամկետում, որը սահմանվում է Դայմլեր կոնցեռնի կողմից, իր ուժերով վերացնել մատուցված ծառայությունների այն թերությունները, որոնք կապված են մատուցված ծառայության որակի հետ և չեն առաջացել Պատվիրատուի մեղքով:

3. Պայմանագրի գինը և հաշվարկների կարգը

- 3.1. Պայմանագրային գինը հաշվարկվում է Պատվիրատուի կողմից ներկայացված յուրաքանչյուր Վերանորոգման պատվերի /օրդերի/ համաձայն:
- 3.2. Պատվիրատուի կողմից յուրաքանչյուր Վերանորոգման պատվերի /օրդերի/ համաձայն կատարված Ծառայությունների արժեքն ամբողջությամբ Կատարողին վճարվում է կանխիկ կամ Կատարողի բանկային հաշվին փոխանցելու միջոցով՝ հաշիվ-ապրանքագիրը ստանալուց հետո՝ 3 (երեք) բանկային օրվա ընթացքում:

4. Կողմերի պատասխանատվությունը

- 4.1. Կողմերը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն են կրում սույն պայմանագրով նախատեսված իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:
- 4.2. Սույն պայմանագրի 3.2 կետում սահմանված ժամկետում Ծառայությունների արժեքը չվճարելու դեպքում Կատարողն իրավունք ունի Պատվիրատուից պահանջել վճարել սույժ՝ յուրաքանչյուր ուշացրած օրվա համար ծառայությունների արժեքի 0,5 տոկոսի չափով:
- 4.3. Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում պարտականությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտավորությունից:
- 4.4. Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե պարտավորությունների չկատարելը կապված է Կորուստ-մաժորային հանգամանքների հետ:
- 4.5. Կատարողը պատասխանատվություն է կրում իր տարածքում Պատվիրատուի ավտոմեքենաների ամբողջականության և անվնաս պահպանման համար:

5. Եզրափակիչ դրույթներ

Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքելու պահից և գործում է մինչև սույն պայմանագրով նախատեսված Կողմերի պարտավորությունների լրիվ կատարումը:

Սույն պայմանագրում Կողմերի համաձայնությամբ կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք օրինական են միայն այն դեպքում, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

Սույն պայմանագրի հետ կապված վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

6. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ԿԱՏԱՐՈՂ

Հասցե՝ - ՀՀ, _____
ՀՎՀՀ - _____
h/h - _____

«Ավանգարդ Մոթորս» ՍՊԸ
Հասցե՝ - ՀՀ, ք. Երևան, Գալի պող. 14/3
ՀՎՀՀ - 00076315
h/h - 15100-02021280100
«Արարատ Բանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ _____ Ս. Պողոսյան

Կ.Տ.

Կ.Տ.